Տեղեկատու թիվ 02-03 (փետրվար-մարտ 2023թ.)

Newsletter N 02-03

Հայ դատի Կենտրոնական Խորհուրդ

Պայմանավորված Արցախին պարտադրված ադրբեջանական շրջափակմամբ՝ Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների գործունեության հիմնական ուղղությունները վերոնշյալ ժամանակահատվածում վերաբերել են Ադրբեջանի նկատմամբ միջազգային ճնշման ապահովմանը և Արցախում ստեղծված իրավիճակի հանրահռչակմանը: Այդ առումով կատարվել են մեծածավալ աշխատանքներ, որոնցից հիմնականները ներկայացնում ենք ստորև:

Հայ դատի ամփոփագրեր փետրվար-մարտ 2023թ

Visit our website

Հայ դատի Արցախի գրասենյակ

ՀՅԴ Հայ դատի Արցախի գրասենյակն անցնող երկամսյակի ընթացքում առցանց հանդիպումներ է ունեցել ԱՄՆ Սենատի և Ներկայացուցիչների պալատի մի շարք անդամների հետ և ներկայացրել տեղում իրավիճակը, ադրբեջանական հերթական ագրեսիայի հետևանքները և հորդորել Ադրբեջանի նկատմամբ կիրառել գործուն ճնշումներ՝ այդ թվում հասնել Ադրբեջանին տրամադրվող ադրբեջանական ռազմական օժանդակության վերացմանը: Մասնավորապես՝ հանդիպումներ են տեղի ունեցել Ֆրենք Փալոնի, Ադամ Շիֆի, Քեյթ Փորթերի, Բարբարա Լիի և այլոց հետ: Հանդիպումներ են տեղի ունեցել նաև կոնգրեսականների գրասեյակների աշխատակազմերի հետ: Հատուկ աշխատանք է տարվել միջազգային մեդիա-հարթությունում, որոնք ներառել են տեղեկատվական հոլովակների տարածում և հարցազրույցներ:
ՀՅԴ Հայ դատի Արցախի գրասենյակի հատուկ խորհրդական Գև Իսկաջյանը, որն Արցախ էր տեղափոխվել անցյալ տարի ԱՄՆ Մոնտեբելո քաղաքից, փետրվարի սկզբին առցանց քննարկում է ունեցել իր շրջանից ընտրված կոնգրեսական Լինդա Սանչեսի հետ և ներկայացրել շրջափակման հետևանքով Արցախում ստեղծված իրավիճակը: Քննարկմանը մասնակցել են նաև Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի Վաշինգտոնի կենտրոնական գրասենյակի և տիկին Սանչեսի աշխատակազմի ներկայացուցիչներ:

Congresswoman Linda Sanchez Holds Dialogue with Constituent Blockaded in Artsakh

Congresswoman Linda Sanchez (D-CA) held a consequential and emotional dialogue this week with her constituent Gev Iskajyan, a resident of Montebello, California who has been blockaded in the Republic of Artsakh for over 45 days as a result of Azerbaijan's genocidal campaign to rid the indigenous Armenian population from their historic homeland. For over a year, Iskajyan has been serving as a senior professional aide for the Armenian National Committee of Artsakh in Stepanakert, the capital of the Republic of Artsakh.
"Given the scale and scope of the humanitarian crisis in Artsakh, I am proud that my Congresswoman – Linda Sanchez – has already taken steps and has pledged her support to end the genocidal blockade instituted by Azerbaijan," expressed Iskajyan after holding a video conference with the Congresswoman and her senior aides on Capitol Hill. "As the people of Artsakh stare down a threat to their very existence, I look forward to continuing to work with Congresswoman Sanchez and her colleagues in the House and Senate to pressure the Biden Administration to hold Azerbaijan accountable for its aggression and end the blockade of Artsakh," added Iskajyan.

Text Link

ANC Artsakh Remarks on 100th Day of Azerbaijan's Artsakh Blockade

Through it all, the people of Artsakh have withstood the pressure, the hardships, and all the human rights abuses committed by Azerbaijan under their imposed blockade. At times, it has felt as if the people of Artsakh have been alone in this crisis, with major world powers turning a blind eye to Azerbaijan's humans rights abuses, even in light of rulings from the International Criminal Court and condemnations from organizations like Amnesty International and Human Rights Watch.
But Artsakh has never been alone, from Stepanakert to Washington DC, from Canada to the European Union,

from Australia to South America and across the middle east — the ANC throughout the world, powered by diasporan Armenians with an unrelenting love for Artsakh and its people, have been working day and night, to raise awareness and spark action by global powers.

In this time we've heard statements by many nations, calling out Azerbaijan for their crimes — but the time has now come for more than words, the time has come for action, for tangible, punitive measures and sanctions against Azerbaijan. Because only then will they think twice, only then will they stop.

Through all of this, the people of Artsakh are ready to do whatever it takes, as they have time and time again.

Because today Artsakh doesn't just represent this small corner of the world, Artsakh represents all people throughout the earth who believe in freedom, who believe in the right to self-determination, who believe in human rights, who believe in a better future.

My compatriots, I know there are times that we feel alone.

But we are not alone.

Your compatriots around the world are with you.

Hai Tahd is with you.

The diaspora is with you.

With its mind, its heart, and all its might.

Text Link

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբ

Հայ դատի Ամերիկայի Արևելյան ափի հանձնախումբը հարյուրավոր կամավորներով ԱՄՆ Կոնգրեսում անցկացրել է Արցախի շահերի պաշտպանության օրեր

Հայ դատի Ամերիկայի Արևելյան ափի հանձնախումբը փետրվարի 1-2-ն ԱՄՆ Կոնգրեսում իրականացրել է Արցախի շահերի պաշտպանությանն ուղղված լոբբիստական երկօրյա գործողություններ։ Հայ դատի կամավորներին էին միացել նաև գործընկեր համայնքային կազմակերպությունների ներկայացուցիչներ, մասնավորապես «Ամերիկա-հունական առաջնորդության խորհուրդից», «Գործողության պահանջ» և «Ի պաշտպանություն քրիստոնյաների» կազմակերպություններից։ Ձեռնարկին միացել էին նաև ցեղասպանություն հանցագործության հետազոտողներ ԱՄՆ Արևելյան ափից։

Text Link

Anti-Blockade Resolution Launched in U.S. House with Broad Bipartisan Backing

A broad-bipartisan coalition of U.S. Representatives introduced Anti-Blockade legislation today, spearheaded by the Congressional Armenian Caucus, backed by the Armenian National Committee of America (ANCA), and supported by a wide array of American civil society

coalition partners, increasing U.S. pressure on Azerbaijan to end its two-month long blockade of 120,000 Armenians in their indigenous Artsakh homeland.

"The strong bipartisan backing for the Anti-Blockade resolution reflects and powerfully reinforces the American consensus around both holding Azerbaijan accountable for its genocidal winter blockade, and also helping the Armenians of Artsakh survive and thrive in freedom and security," said Aram Hamparian, Executive Director of the ANCA. "Armenians and allied Americans can voice support for this measure by visiting anca.org/resolution."

Text Link

ANCA and Community Leaders Meet with Beverly Hills City Officials Regarding Anti-Armenian Hate Incident at AYF Protest

The Armenian National Committee of America (ANCA) local and national leadership and a group of leaders from Armenian organizations met with City of Beverly Hills Mayor Lili Bosse, Police Chief Mark Stainbrook, and City Manager Nancy Hunt-Coffey, who came to Glendale on February 10th to discuss the anti-Armenian flyers seen on the route of a protest organized by the Armenian Youth Federation in response to Azerbaijan's blockade of Artsakh.

The flyers, which lined utility poles from the Federal Building to the Azerbaijani Consulate in Los Angeles, threatened that a group of countries, including Azerbaijan and Turkey, would "wipe Armenia off the map" – a brazen incitement of genocidal sentiments against the Armenian people.

After the flyers were discovered, the leadership of ANCA local chapters immediately alerted area elected officials and law enforcement to the incident. In response to the incident, Beverly Hills Mayor Lili Bosse condemned the incitement of anti-Armenian hate, stating that "hate has no place in Beverly Hills or anywhere. I will always stand up, I will always speak out." Los Angeles Mayor Karen Bass also issued a comment, remarking, "there is no place for anti-Armenian hatred in Los Angeles or anywhere else."

Text Link

ANCA Testifies for Expanding Humanitarian Aid to Artsakh, Stopping Military Aid to Azerbaijan

Government Affairs Director Tereza Yerimyan outlined the Armenian National Committee of America's (ANCA) policy priorities in testimony submitted to the U.S. House panel drafting the Fiscal Year 2024 (FY24) foreign aid bill – with a sharp focus on delivering an urgently needed $75 million aid package to Artsakh and holding Azerbaijan accountable for its ongoing Artsakh blockade and increasing aggression.

Yerimyan made the case that, "in the wake of Azerbaijan's ethnic-cleansing of Artsakh (Nagorno Karabakh), the occupation of Armenia's sovereign territory, and the ongoing humanitarian blockade of Artsakh, we ask this Subcommittee hold the Aliyev regime accountable by cutting off all U.S. military aid to its armed forces and help meet pressing humanitarian

and recovery needs in Artsakh with a robust assistance package."

Text Link

Preparing Tomorrow's Leaders Today with the ANCA Leo Sarkisian Summer Internship

The Armenian National Committee of America (ANCA) is proud to announce the annual launch of the Leo Sarkisian Summer Internship (LSI) and Maral Melkonian Avetisyan Fellowship, with an application deadline of April 15th, for university students interested in advancing Armenian American policy priorities and gaining firsthand experience in federal-level advocacy.

The six-week in-person program, which will run from June 12th to July 21st, 2023, provides a unique opportunity for participants to learn all things advocacy, communications, and public policy. The LSI program is an integral part of a growing effort to provide Armenian Americans greater opportunities to explore careers on Capitol Hill, in the U.S. Foreign Service, and key Washington DC, foreign policy think tanks. Interested applicants are encouraged to apply by April 15th, 2023.

"The ANCA's Leo Sarkisian Summer Internship and Maral Melkonian Avetisyan Fellowship are more than just your average internships – they're immersive and unique experiences that empower young Armenian Americans to grow personally and professionally. Through our program, participants gain the skills, knowledge, and confidence to become leaders and make a real impact in their communities and beyond," said ANCA Youth Programs Associate Director Tatevik Khachatryan.

Text Link

ANCA Rising Leaders Program Inspires Next Generation of Armenian American Advocates

The Armenian National Committee of America's (ANCA) Rising Leaders program brought a remarkable group of Armenian American youth leaders from across the U.S. to our nation's capital for a unique 3-day career development and civic education immersion seminar. Students participating in the first of two sessions, held on March 14th to 16th, had the opportunity to delve into policy, politics, and media careers, while simultaneously advancing Armenian American community's pro-Artsakh/Armenia priorities.

"Our 2023 ANCA Rising Leaders brought unique perspectives into everything they did. We had a wide range of academic backgrounds, including political science, public health, and engineering," said ANCA Youth Programs Associate Director Tatevik Khachatryan. "It's truly inspiring seeing what they are capable of and imagining all they have to offer. Session #1 of the ANCA Rising Leaders 20023 was an outstanding success, and we extend our heartfelt gratitude to our program partners, esteemed speakers, generous donors, and above all, our phenomenal participants, for their invaluable contributions."

Text Link

69 U.S. Representatives from 18 States Seek Termination of U.S. Military Aid to Azerbaijan

As Azerbaijan's siege of Artsakh passed the 100-day mark this week, a bipartisan group of sixty-nine U.S.

Representatives, led by Congressional Armenian Caucus founding Co-Chair Frank Pallone (D-NJ), once again called for ending military aid to Azerbaijan and sending $150 million in assistance to Artsakh and Armenia, reported the Armenian National Committee of America (ANCA).

The request comes in the form of a letter to Appropriations Subcommittee on State-Foreign Operations Chairman Mario Diaz Balart (R-FL) and Ranking Member Barbara Lee (D-CA), who have already begun drafting the U.S. House version of the Fiscal Year 2024 (FY24) foreign aid bill.

“Continued U.S. military aid to Azerbaijan represents a free pass for Azerbaijani aggression, a greenlight for Azerbaijani escalation,” said ANCA Executive Director Aram Hamparian. “It should have stopped on day one with President Biden, who entered office as a sharp critic of arming and aiding Aliyev. But, if our President won’t do what’s right, Congress needs to act.”

Text Link

California Assembly Judiciary Committee Passes ANCA-Backed Resolution Condemning Artsakh Blockade

The Armenian National Committee of America – backed anti-blockade resolution AJR 1, which condemns Azerbaijan’s 100-day blockade of Artsakh, has been passed by the California Assembly Committee on Judiciary with overwhelming bipartisan support.

ANCA local leaders were present during the committee hearing, and testified in support of the expeditious passage of the resolution, which reaffirms California’s recognition of Artsakh’s right to self-determination, urges the Biden Administration to provide emergency humanitarian assistance to the Armenians of Artsakh, and calls for the Biden Administration to holds Azerbaijan accountable for its aggression by enforcing Section 907 restrictions on military aid to Baku.

“This is a courageous step in condemning Azerbaijan’s blockade of Artsakh, and the reaffirmation of California’s commitment to Artsakh’s right to self-determination speaks to the essence of our values as Americans, and as Californians,” stated ANCA San Francisco representative Khatchig Tazian in remarks before the committee. “With this resolution, let us make sure the U.S. Government and our tax dollars are not enabling Azerbaijan’s aggression against the Armenian people – as the Aliyev regime perpetrates this genocide right under the nose of the international community.”

Text Link

Գլենդելի Հայ Դատի Յանձնախումբը խստօրէն դատապարտում է Գլենդելում հակահայկական թռուցիկներ բաժանելը

Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի Գլենդելի Մասնաճիւղը խստօրէն դատապարտում է վերջերս Գլենդելում տեղի ունեցած ատելութեան միջադէպը, որտեղ անձանց միջոցով տարածուել է հակահայ թռուցիկներ, որոնք քարոզում են Հայոց ցեղասպանութիւնն աւարտին հասցնելու սարսափելի գաղափարը: Այս դատապարտելի արարքը յաջորդում է մի քանի շաբաթ առաջ

Բեւերլի Հիլզում տեղի ունեցած նմանատիպ միջադէպին, որը ցոյց է տալիս մեր համայնքներում հակահայ տրամադրութիւնների եւ ատելութեան յանցագործութիւնների աճող վտանգը:
Որպէս կազմակերպութիւն, որը նուիրուած է ամերիկահայ համայնքի բարօրութեանը եւ առաջընթացին, մենք խորապէս անհանգստացած ենք այս ատելութեան արարքներից, եւ տեղական իշխանութիւններին կոչ ենք անում մանրակրկիտ հետաքննել այս միջադէպերը եւ պատասխանատուութեան ենթարկել մեղաւորներին:
Հայոց ցեղասպանութիւնը՝ մարդկային պատմութեան մութ էջերից է, որը յանգեցրեց 1.5 միլիոն հայերի մահուան եւ տեղահանութեան: Նման վայրագութիւնների շարունակմանը նպաստելը ոչ միայն բարոյապէս զզուելի է, այլ նաեւ ուղղակի սպառնալիք է մեր համայնքի անվտանգութեան եւ բարեկեցութեան համար:

Text Link

California Assembly Passes ANCA-Backed Resolution Condemning Artsakh Blockade with Overwhelming Support

The Armenian National Committee of America (ANCA) California local chapters welcome the California State Assembly's passage of AJR 1 condemning Azerbaijan's blockade of Artsakh.
The resolution was passed with overwhelming bipartisan support, with 58 representatives joining as co-sponsors, and the final vote tally standing at 59 votes to 0.
"The passage of AJR 1 is a powerful step towards holding Azerbaijan accountable for its unabated aggression against the Armenians of Artsakh," remarked ANCA National Board Member Aida Dimejian. "We're grateful to have worked closely with Assemblymember Chris Holden and his colleagues on ensuring the timely passage of this resolution, which calls on the U.S. Government to take immediate action to pressure Azerbaijan to end its cruel and inhumane blockade of Artsakh."
The ANCA's California chapters worked closely with Assemblymember Chris Holden, who introduced the resolution, in an effort to reaffirm California's recognition of Artsakh's right to self-determination, and urge the Biden Administration to provide emergency humanitarian assistance to the Armenians of Artsakh. The resolution also calls for the Biden Administration to hold Azerbaijan accountable for its aggression by enforcing Section 907 restrictions on military aid to Baku.

Text Link

Հայ դատի Եվրոպայի գրասենյակ

European Parliament's Committee on Foreign Affairs adopts extensive report on Armenia

On 9 February the European Parliament (EP) Committee on Foreign Affairs (AFET) adopted the report on EU-Armenia relations 2021/2022, which underlines key points regarding the relations of the European Union and Armenia in accordance to EU-Armenia. The report also addresses the

conflict in Nagorno Karabakh / Artsakh and the normalization of relations between Armenia and Azerbaijan.
The EP Foreign Affairs Committee condemns the military incursions by Azerbaijan into the sovereign territory of Armenia since May 2021. Besides highlighting the Azerbaijani violations of the interstate border and urging the return to initial positions, the Committee confirms that the Azerbaijani aggression of September 2022 was not related to the Nagorno-Karabakh conflict.
The report reaffirms that a comprehensive peace treaty between Armenia and Azerbaijan must guarantee the integrity of the sovereign territory of Armenia, the rights and the security of the Armenian population residing in Nagorno-Karabakh.

Text Link

Եվրոպական Խորհրդարանն ընդունել է ՀՀ-ԵՄ հարաբերությունների 2021-2022թթ. զեկույցը

վրախորհրդարանի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը փետրվարի 9-ին ընդունել է ԵՄ-Հայաստան հարաբերությունների 2021-2022թթ. զեկույցը, որում կարևոր անդրադարձներ կան ՀՀ-ԵՄ հարաբերությունների վերաբերյալ: Զեկույցն անդրադառնում է նաև Արցախի հակամարտությանը, ինչպես նաև Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունների կարգավորման գործընթացին:
Եվրոպական Խորհրդարանի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը դատապարտում է Ադրբեջանի կողմից 2021 թվականի մայիսից Հայաստանի ինքնիշխան տարածք ներխուժումը, ինչպես նաև Ադրբեջանի կողմից միջպետական սահմանների խախտումները և ընդգծում զինված ուժերը սկզբնական դիրքեր վերադարձնելու անհրաժեշտությունը: Հանձնաժողովը նկատում է, որ 2022 թվականի սեպտեմբերյան ադրբեջանական ագրեսիան կապված չէ Արցախյան հիմնախնդրի հետ:
Զեկույցը վերահաստատում է, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև երկարատև խաղաղ համաձայնությունը պետք է երաշխավորի Հայաստանի ինքնիշխան տարածքի ամբողջականությունը, ինչպես նաև Արցախի ժողովրդի իրավունքներն ու անվտանգությունը:
Զեկույցում, իբրև Ղարաբաղյան հակամարտության բուն պատճառ է նշվում Լեռնային Ղարաբաղի նախկին ինքնավար մարզի կարգավիճակի և բնակչության անվտանգության չլուծված խնդիրը:

Text Link

Եվրոպական Խորհրդարանից Հայաստան է ժամանում նոր պատվիրակություն

ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի աշխատանքների արդյունքում փետրվարի 21-24-ը փաստահավաք առաքելությամբ Հայաստան են այցելելու Եվրոպական Խորհրդարանի ֆրանսիացի պատգամավորներ, ԵԽ-ում Արցախի հետ բարեկամության խմբի համանախագահներ Սիլվի Գիյոմը և Ֆրանսուա Ալֆոնսին, ինչպես նաև հունգարացի խորհրդարանական, Արցախի հետ բարեկամության խմբի անդամ Աթիլա Արա-Կովաչը: Պատվիրակությանը Հայաստանում ուղեկցելու են ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի նախագահ Գասպար Կարապետյանը,

գրասենյակի տնօրեն Հեղինե Էվինյանը և ՀՅԴ Հայ դատի Կենտրոնական գրասենյակի հատուկ ծրագրերի պատասխանատու Գևորգ Ղուկասյանը:
Հիշեցնենք, որ նույնաբովանդակ այցելությամբ Եվրախորհրդարանի մեկ այլ պատվիրակություն Հայաստան էր այցելել 2022թ. հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 4-ը, որի անդամները կարևոր դերակատարում ունեցան անցած ամիսների ընթացքում Եվրոպական խորհրդարանում՝ Հայաստանին վերաբերող քննարկումների և փաստաթղթերի ընդունման գործում: Մասնավորապես՝ հիշատակման է արժանի Եվրոպական Միության ընդհանուր պաշտպանական և արտաքին քաղաքականության զեկույցը, «Լեռնային Ղարաբաղում շրջափակման հումանիտար հետևանքները» վերտառությամբ բանաձևը և ԵՄ-Հայաստան հարաբերությունների 2021-2022թթ. զեկույցը, որոնցում Եվրոպական խորհրդարանի՝ Հայաստանին ու Արցախին վերաբերող քաղաքական դիրքորոշումները գրեթե լիովին համահունչ են ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի պատկերացումներին:

Text Link

Եվրախորհրդարանը կոչ է անում ԵՄ խորհրդին պատժամիջոցներ կիրառել Ադրբեջանի նկատմամբ, եթե վերջինս չկատարի Արդարադատության միջազգային դատարանի որոշումը

Եվրոպական խորհրդարանի լիագումար նիստը մարտի 15-ին ընդունել է ԵՄ-Հայաստան և ԵՄ-Ադրբեջան հարաբերությունների 2021-2022թթ. զեկույցները, որոնք անդրադառնում են Հայաստանի և Ադրբեջանի հետ ԵՄ հարաբերությունների առանցքային կետերին, Արցախի հակամարտությանը և տարածաշրջանում Եվրամիության դերին՝ կայունության ու խաղաղության հաստատման գործում:
Երկու զեկույցները վերահաստատում են՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության համապարփակ պայմանագիրը պետք է երաշխավորի Հայաստանի ինքնիշխան տարածքի ամբողջականությունը, Արցախում բնակվող հայ բնակչության իրավունքներն ու անվտանգությունը:
Եվրախորհրդարանն ընդգծում է՝ ղարաբաղյան հակամարտությունը պահանջում է միջազգային իրավունքին համապատասխան համապարփակ քաղաքական կարգավորում, հիմնված ՄԱԿ-ի կանոնադրությամբ և 1975թ. ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտով ամրագրված սկզբունքների վրա, մասնավորապես՝ ուժի կամ դրա սպառնալիքի չկիրառումը, տարածքային ամբողջականությունը, ինքնորոշման իրավունքը, ինչպես նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի 2009թ. հրապարակված բանակցային հիմնարար սկզբունքները:

Text Link

European Parliament calls on the EU Council to impose sanctions on Azerbaijan, if it does not implement ICJ’s order

On 15 March 2022 Plenary of the European Parliament (EP) adopted the reports on EU- March Armenia and EU-Azerbaijan relations 2021/2022.
The reports focus on key points regarding the relations of the EU with Armenia and Azerbaijan, they also

address the conflict in Nagorno Karabakh/ Artsakh and the role of the European Union in promoting stability and peace in the region.
Both reports reaffirm that a comprehensive peace treaty between Armenia and Azerbaijan must guarantee the integrity of the sovereign territory of Armenia, the rights and the security of the Armenian population residing in Nagorno-Karabakh. The EP emphasizes that, the Nagorno-Karabakh conflict requires a comprehensive political settlement in accordance with international law, including the principles enshrined in the UN Charter, the 1975 OSCE Helsinki Final Act, in particular the three principles of non-use of force, territorial integrity and self-determination, the OSCE Minsk Group's 2009 Basic Principles.
The European Parliament welcomes the steps undertaken by the Armenian and Azerbaijani leaderships to achieve lasting and sustainable peace in the region, however at the same time denounces the behavior of the Azerbaijani leaders undermining these efforts, in particular through explicit threats of further attacks, frequent border violations, territorial claims on so-called Western Azerbaijan, or the spread of hate speech against the Armenian population, especially in education.

Text Link

Հայ դատի Կանադայի հանձնախումբ

Կանադայի Հայ դատի հանձնախմբի հայտարարությունը

Կանադայի Հայ դատի հանձնախմբի հետեւողական աշխատանքների շնորհիվ հունվարի 25-ին Կանադայի խորհրդարանի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը երկու առանձին նիստ է գումարել՝ քննարկելու Ադրբեջանի կողմից Արցախի շարունակվող շրջափակումը։
Սա պատմական ձեռքներում էր, որովհետեւ Կանադայի խորհրդարանում առաջին անգամ հանդես եկավ Արցախի Հանրապետության ներկայացուցիչ՝ ներկայացնելով Արցախի բնակչության պայքարը հանուն արժանապատիվ կյանքի։ Պատմական է նաեւ այն առումով, որ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» ձեւակերպումը տեղ գտավ բանաձեւում, ինչն ինքնին Արցախի անկախության ճանաչման գործընթացում մեծ քայլ է՝ հաշվի առնելով, որ խորհրդարանի ամենաազդեցիկ հանձնաժողովներից մեկը նման ձեւակերպմամբ բանաձեւ որդեգրեց։

Text Link

ՀՅԴ Հայ դատի Կանադայի հանձնախմբի աշխատանքների արդյունքում Արցախի շրջափակման, դրա արդյունքում տեղում ստեղծված իրավիճակը և առհասարակ ադրբեջանական ագրեսիվ քաղաքականությունը բարձր մակարդակով քննարկման նյութ է եղել կանադայի պետական, հասարակական-քաղաքական շրջանակներում։
Կանադայի խորհրդարանի Համայնքների պալատի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողով փետրվարի 14-ին Ադրբեջանին կոչ է արել երաշխավորել Լաչինի միջանցքով ազատ տեղաշարժը։ Համայնքների պալատին

ներկայացված միջնորդությունն ընդունվել է միաձայն: Կանադայի Հայ դատի հանձնախումբը շնորհակալություն է հայտնել պատգամավոր Ստեֆան Բերժերոնին, ինչպես նաև հանձնաժողովի բոլոր անդամներին այս կարևոր հարցում ցուցաբերած աջակցության համար:

Վերջին երկու ամիսների ընթացքում Կանադայի քաղաքական ասպարեզից շուրջ մեկ տասնյակի հասնող խորհրդարանականներ դատապարտել են Արցախի նկատմամբ ադրբեջանական հերթական ագրեսիան: Մարտի 10-ին Հայ դատի Կանադայի հանձնախումբը սոցցանցային արշավ է սկսել՝ փորձելով համախմբել կանադահայ համայնքին, որպեսզի հասարակական ավելի լայն ընդգրկմամբ հնարավոր լինի հասնել Կանադայի արտաքին գործերի նախարար Մելանի Ջոլիի կողմից Ադրբեջանին հասցեական դատապարտմանը: Մարտի 27-ին, ի պատասխան Ժան Յիփի հարցմանը, ԱԳ նախարարը Ադրբեջանին կոչ է արել բացելի Լաչինի միջանցքը:

Ազատական կուսակցության անդամ Ժան Յիփը հարցման մեջ նշել էր, որ իր ընտրատարածքի հայ համայնքը խորապես մտահոգ է Արցախի հակամարտության լարվածության սրման առնչությամբ և հիշեցրել, որ արդեն ավելի քան հարյուր օր Արցախի շրջափակումը շարունակվում է, առկա է մարդասիրական խորացող ճգնաժամ, իսկ Արցախի ժողովուրդը մտավախություն ունի, թե իրավիճակը շուտով կարող է վերստին սրվել: Խորհրդարանականը հարցրել է, արդյո՞ք Կանադայի արտաքին գործերի նախարարը կարող պարզաբանել թե կառավարությունն ի՞նչ քայլեր է ձեռնարկել այս հարցի ուղղությամբ: Պատասխանելով հարցին՝ Ջոլին մասնավորապես հայտնել է՝ Կանադան շարունակում է կոչ ուղղել Ադրբեջանի իշխանություններին բացելու Լաչինի միջանցքը և ազատ արձակելու հայ ռազմագերիներին: Նախարարը նաև շեշտել է, որ մարդասիրական ճգնաժամի ավելի վատթարացումը պետք է կանխվի: Նա միաժամանակ նաև ավելացրել է, որ Կանադան իր զորակցությունն է հայտնում Հայաստանում Եվրոպական Միության քաղաքացիական առաքելության գործունեությանը:

Հայ դատի Ավստրալիայի հանձնախումբ

Australian shadow Foreign Minister: Azerbaijan must open the corridor and keep it open

Australia's Shadow Foreign Affairs Minister, Senator the Hon. Simon Birmingham has called on Azerbaijan to "open the corridor and keep it open", reported the Armenian National Committee of Australia (ANC-AU).

The most recent sentiments shared by the Opposition's foreign affairs leader follow a statement provided to the ANC-AU in December 2022, in which Senator Birmingham noted the Liberal and National Coalition's acknowledgement of Azerbaijan's responsibility to "guarantee the safe movement of civilians, vehicles and cargo in both directions along the corridor" and called for the 2020 November trilateral agreement to be respected.

This time, in response to ANC-AU First Responder Aris Bedrosian, Senator Birmingham wrote: "This reflects the Coalition's continued strong support for a halt to actions that escalate the conflict in the region, and are in line with my previous public call in September last year for an end to hostilities and targeting of civilians, their homes and civilian infrastructure in Armenia."

Senator Birmingham has pledged to pursue Azerbaijan's blockade of the Republic of Artsakh and the Australian Government's response on the issue.

Text Link

Paul Fletcher MP calls on the Australian Government to support Armenia and Artsakh against Azerbaijani aggression

On Tuesday, 14th February 2023, the Hon. Paul Fletcher MP became the third Federal Australian politician to rise in the first parliamentary

sitting fortnight of 2023 to speak out against Azerbaijan's illegal aggressive tactics against the people of Artsakh and Armenia, reported the Armenian National Committee of Australia (ANC-AU).
The Member for Bradfield, who was Australia's Communications Minister in the previous parliamentary term, utilised a 90-second Private Members Statement to highlight Azerbaijan's "new wave of aggression, cutting off the only land link between Artsakh and Armenia in an attempt to subjugate the civilian population to a new form of psychological terror".

Text Link

Armenian National Committee of Australia conducts meetings with candidates ahead of 2023 NSW elections

Members of the Armenian National Committee of Australia(ANC-AU) National Office have met with key candidates ahead of the 2023 New South Wales State Elections, which will be held on Saturday, 25th March 2023.
As the peak public affairs body of the Armenian-Australian community, the ANC-AU is conducting these meetings in an effort to advance relationships ahead of the next parliamentary term with the aim of ensuring greater representation of Armenian-Australian issues.
In meetings with candidates, the ANC-AU covered global Armenian issues, including ascertaining support for Federal recognition of the Armenian, Assyrian and Greek Genocides, support for the rights to self-determination for the Armenians of the Republic of Artsakh, and the strengthening of bilateral relations between Armenia and New South Wales.
New South Wales is home to the largest Armenian-Australian community, with a large concentration of community organisations and structures, therefore, the meetings were also used as an opportunity to discuss the unique local issues of concern for Armenians in Willoughby, Ryde, the Northern Beaches and Western Sydney.

Text Link

NSW Liberal Coalition Pledges 100,000 Dollars for Armenian-Australian Archives Project

The New South Wales Liberal and National Government has pledged $100,000 to the Armenian-Australian community in support of the establishment of the Armenian-Australian Archives Project, a proposal by the Armenian National Committee of Australia in partnership with Galstaun College.
With the New South Wales state election scheduled to take place on Saturday 25th March 2023, the Armenian National Committee of Australia (ANC-AU) National Office has conducted meetings with incumbents and candidates in Armenian-Australian populated electorates.
These meetings have helped secure widespread support for Federal Government recognition of the Armenian Genocide, the right to self-determination of the people of Artsakh and support for the Armenian-Australian community organisations and structures, including this special funding commitment to bring to life the Armenian-Australian Archives Project.

Text Link

Armenian National Committee of Australia Visits

Victorian State Parliament

The Armenian National Committee of Australia (ANC-AU) National Office followed up trips to Canberra and Brisbane with two days of advocacy in the Victorian State Parliament.
Following the inaugural Joint Justice Initiative Advocacy Week launched on Monday 20th February 2023, the ANC-AU National Office ventured to Melbourne, and bolstered by local branch member, Jessica Cinar, represented issues of importance to Armenian-Australians to state parliamentarians.
The Armenian-Australian peak public affairs body was also joined by leaders of the Assyrian-Australian and Greek-Australian communities in Victoria, and met with representatives from the Victorian Labor Party, the Victorian Liberal Party and the Victorian Greens.
The ANC-AU met with James Newbury – Member for Brighton, Meng Tak – Member for Clarinda, Jess Wilson – Member for Kew, Chris Crewther – Member for Mornington, Ann-Marie Hermans – Liberal Member of the Legislative Council, Michael Galea – Labor Member of the Legislative Council, Sonja Terpstre – Labor Member of the Legislative Council, Nick McGown – Liberal Member of the Legislative Council and Samantha Rathnam – Leader of the Victorian Greens and Member of the Legislative Council.
The delegation congratulated all newly elected and re-elected parliamentarians on their success at the 2022 Victorian state election and discussed ways to advance Armenian-Australian issues of concern to the local community.

Text Link

Հայ դատի Հարավային Ամերիկայի գրասենյակ

ՀՅԴ Հայ դատի Հարավային Ամերիկայի հանձնախմբի աշխատանքների արդյունքում Արթուր Խաչատրյանը և Գեղամ Ստեփանյանը Արգենտինայում մասնակցել են Մարդու իրավունքների համաշխարհային 3-րդ ֆորումին

ՀՅԴ Հայ դատի Հարավային Ամերիկայի հանձնախմբի հրավերով և Մարդու իրավունքների համաշխարհային երրորդ ֆորումի աշխատանքներին մասնակցելու նպատակով ՀՀ Ազգային ժողովի դաշնակցական պատգամավոր Արթուր Խաչատրյանը և Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը մարտի 19-25-ը եղել են Բուենոս Այրեսում։
«Մարդու իրավունքների համաշխարհային ֆորում» անունը կրող միջոցառումներից առաջինն անցկացվել է 2013թ. Բրազիլիայում՝ 74 երկրների և շուրջ 700 կազմակերպությունների մոտ 5000 պատվիրակների մասնակցությամբ։ Երկրորդ ֆորումն անցկացվել է հաջորդ տարի Մարոկկոյում՝ Մարաքեշում, որտեղ մասնակիցներ էին ժամանել աշխարհի 95 երկրից և շուրջ 750 կազմակերպությունից։
Հայ դատի Հարավային Ամերիկայի հանձնախումբը 2022թ. մայիսի 28-ին համագործակցության հուշագիր է ստորագրել CIPDH-UNESCO (Մարդու իրավունքների խթանման միջազգային կենտրոն) կազմակերպության հետ, որի գործունեությունը հիմնված է Արգենտինայի և UNESCO-ի միջև կնքված համապատասխան պայմանագրի վրա։ Հայ դատի հանձնախմբի և CIPDH-UNESCO-ի միջև կնքված հուշագրի հիման վրա էլ հնարավոր է եղել ապահովել Գեղամ Ստեփանյանի և Արթուր Խաչատրյանի մասնակցությունը ֆորումին։

Text Link

ՀՀ ԱԺ պատգամավոր Արթուր Խաչատրյանը Արգենտինայում և Ուրուգվայում ներկայացրել է Արցախում ստեղծված իրավիճակը

ՀՅԴ Հարավային Ամերիկայի Հայ Դատի հանձնախմբի հրավերով և Մարդու իրավունքների համաշխարհային երրորդ ֆորումի աշխատանքներին մասնակցելու նպատակով ՀՅԴ անդամ, Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանը մարտի 20-24-ն այցելել է Արգենտինայի Հանրապետություն և Ուրուգվայի Արևելյան Հանրապետություն: Պատգամավորը Մարդու իրավունքների համաշխարհային ֆորումի շրջանակներում կազմակերպված «Խաղաղության գործընթացները Լատինական Ամերիկայում և աշխարհում» պանելային քննարկման ժամանակ ներկայացրել է Արցախյան հակամարտության ծագման պատմությունը, զարգացումը, Արցախի Հանրապետությունում և Հայաստանի սահմաններին 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո և 2021-22 թվականներին Հայաստանի դեմ սանձազերծած ագրեսիայի հետևանքով ստեղծված կացությունը և հակամարտության կարգավորման ուղիները: Նա նաև պատասխանել է քննարկման մասնակիցների հարցերին: Միջոցառման ժամանակ քննարկված մյուս խաղաղության գործընթացները վերաբերել են Ֆոլկլենդյան (Մալվինյան) կղզիների շուրջ բրիտանա-արգենտինյան հակամարտությանը և Կոլումբիայում տասնամյակներ տևած քաղաքացիական պատերազմին:

Text Link

Հայ դատի Երուսաղեմի հանձնախումբ

Հայ դատի Երուսաղեմի հանձնախմբի տևական և գործուն ջանքերի արդյունքում Իսրայելի Հայֆա քաղաքում մարտի 20-ին տեղի է ունեցել Հայոց ցեղասպանության հրապարակի բացումը՝ չնայած Թել Ավիվում Թուրքիայի դեսպանատան կողմից գործադրված ճնշմանը: Միջոցառմանը ներկա են գտնվել Հայֆայի քաղաքապետ Էյնաթ Քալիշ-Ռոտեմը, քաղաքային խորհրդի անդամներ, Իսրայելում Հայաստանի դեսպան Արման Հակոբյանը, Երուսաղեմի Հայոց պատրիարքության ներկայացուցիչները, Երուսաղեմի Հայ դատի հանձնախումբը, Իսրայելի հայկական համայնքի անդամներ, ինչպես նաև Հայֆայի տարբեր համայնքների ներկայացուցիչներ:

Հայ դատի Լիբանանի հանձնախումբ

ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի Մարմինը Սումկայիթի Եղեռնագործութեան 35-Ամեակին Առիթով Նամակներ Յղեց Լիբանանի Մէջ Օտարերկրեայ Դեսպաններուն

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը շաբաթ օր

Սումկայիթի եղեռնագործութեան 35-ամեակին առիթով նամակներ յղեց Լիբանանի մէջ օտարերկրեայ դեսպաններու, որոնց շարքին՝ Միացեալ Նահանգներու, Ռուսիոյ, Ֆրանսայի, Եւրոպական Միութեան, Նետերլանտներու, Շուէտի, Գերմանիոյ եւ Զուիցերիոյ դեսպաններուն:
Լիբանանի Հայ դատի մարմինը իր նամակին մէջ ներկայացնելէ ետք արցախահայութեան Հայաստանին միանալու խաղաղ շարժումին Ազրպէյճանի բիրտ ու վայրագ հակազդեցութիւնն ու Արցախի՝ 1991-ին Խորհրդային Միութեան ներքին օրէնսդրութեան ու անկախ պետութիւն հաստատելու միջազգային օրէնքին համահունչ սկզբունքներու հիմամբ անկախութիւն հռչակելով Կովկասի մէջ ազատութեան ու ժողովրդավարութեան փարոս դառնալը՝ նշեց, որ 1994-ին ստորագրուեցաւ Հայաստանի, Արցախի Հանրապետութեան եւ Ազրպէյճանի միջեւ եռակողմ զինադադար մը, որ վերջինիս կողմէ շարունակաբար խախտուեցաւ: Այդ խախտումներուն ամէնէն նկատառելի օրինակները ապրիլ 2016-ի քառօրեայ պատերազմն ու 2020-ի 44-օրեայ պատերազմն էին:
Հայ դատի մարմինը նշեց, որ 9 նոյեմբեր 2020-ին ստորագրուեցաւ նոր զինադադար մը, սակայն ազրպէյճանական կողմը շուտով վերադարձաւ իր սովորութեան եւ սկսաւ զայն ոտնահարել, մասնաւորաբար երբ 12 դեկտեմբեր 2022-ին փակեց Բերձորի միջանցքը:

Text Link

ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի Մարմինը Կ՛արձագանգէ Գերմանիոյ Վարչապետի Յայտարարութեան՝ Զայն Նկատելով «Առաջին Ու Ճիշդ Ուղղութեամբ Քայլ Մը»

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը երէկ Լիբանանի մէջ Գերմանիոյ դեսպան Անտրէաս Քինտըլին յղեց նամակ մը՝ անդրադառնալով 2 մարտ 2023-ին Գերմանիոյ վարչապետին կատարած «Գերմանիան կարեւոր կը նկատէ խաղաղ հանգուցալուծման հասնիլը՝ Հայաստանի եւ Ազրպէյճանի տարածքային ամբողջականութեան, ինչպէս նաեւ Լեռնային Ղարաբաղի քաղաքացիներու ինքնորոշման իրաւունքի տեսանկիւնէն: Աւելի՛ն, այս բոլոր սկզբունքներն ալ համահաւասար են» յայտարարութեան:
Հայ դատի մարմինը յայտնեց, որ շրջանին մէջ խաղաղութիւնը չի կրնար մնայուն ըլլալ՝ առանց յարգելու Արցախի բնիկ ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը, մասնաւորաբար նկատի ունենալով այն յստակ ու շարունակուող գոյութենական վտանգը, որ ան կը դիմագրաւէ ու դիմագրաւած է պատմութեան ընթացքին: «Պէտք է միայն տեսնել Նախիջեւանի բնիկ հայ ժողովուրդի ճակատագիրը՝ հասկնալու համար միջազգային օրէնքի այդ հիմնարար սկզբունքի յարգման կարեւորութիւնն ու հրատապութիւնը», աւելցուց Հայ դատի մարմինը:

Text Link

ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի Մարմինը Ողջունեց Նետերլանտներու Արտաքին Գործոց Նախարարի Կեցուածքներն Ու Կառավարութեան Ջանքերը

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը երէկ Լիբանանի մէջ Նետերլանտներու դեսպան Հանց Փիթըր վան տեր Վուտէի յղեց նամակ մը, որուն մէջ ողջունեց Նետերլանտներու արտաքին գործոց նախարար Վոփքէ

Հուքսթրայի կողմէ նետերլանտցի երեսփոխաններու Նետերլանտներու եւ Ազրպէյճանի ղեկավարներու հանդիպումին վերաբերեալ հարցումներուն ի պատասխան արտայայտած կեցուածքները, ինչպէս նաեւ նետերլանտական կառավարութեան ջանքերը Բերձորի միջանցքի վերաբացման համար, ինչ որ վերջ պիտի տայ Արցախի Հանրապետութեան մէջ 12 դեկտեմբեր 2022-էն ի վեր սկսած եւ հետզհետէ խորացող մարդասիրական ճգնաժամին:
Նետերլանտական դիւանագիտութեան պետը յայտնած էր, որ երկրի վարչապետ Մարք Ռութէ հանդիպումի ընթացքին շեշտած է, որ Լեռնային Ղարաբաղի քաղաքային բնակչութիւնը պէտք չէ քաղաքական կացութեան զոհ դառնայ, եւ կարեւոր նկատած է Բերձորի միջանցքի ապաշրջափակումը՝ ի կատարումն 2020 թուականի եռակողմ համաձայնութեան:

Text Link

ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի Մարմինը Կ՛արձագանգէ Գերմանիոյ Վարչապետի Յայտարարութեան

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը երէկ Լիբանանի մէջ Գերմանիոյ դեսպան Անտրէաս Քինտըլին յղեց նամակ մը՝ անդրադառնալով 2 մարտ 2023-ին Գերմանիոյ վարչապետին կատարած «Գերմանիան կարեւոր կը նկատէ խաղաղ հանգուցալուծման հասնիլը՝ Հայաստանի եւ Ազրպէյճանի տարածքային ամբողջականութեան, ինչպէս նաեւ Լեռնային Ղարաբաղի քաղաքացիներու ինքնորոշման իրաւունքի տեսանկիւնէն: Աւելի՞ն, այս բոլոր սկզբունքներն ալ համահաւասար են» յայտարարութեան:
Հայ դատի մարմինը յայտնեց, որ շրջանին մէջ խաղաղութիւնը չի կրնար մնայուն ըլլալ՝ առանց յարգելու Արցախի բնիկ ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը, մասնաւորաբար նկատի ունենալով այն յստակ ու շարունակուող գոյութենական վտանգը, որ ան կը դիմագրաւէ ու դիմագրաւած է պատմութեան ընթացքին: «Պէտք է միայն տեսնել Նախիջեւանի բնիկ հայ ժողովուրդի ճակատագիրը՝ հասկնալու համար միջազգային օրէնքի այդ հիմնարար սկզբունքի յարգման կարեւորութիւնն ու հրատապութիւնը», աւելցուց Հայ դատի մարմինը:

Text Link

Հայ դատի Թեհրանի գրասենյակ

«Հայ Դատն այսօր» 14-րդ խորհրդաժողովն ամփոփեց իր երկօրեայ բովանդակային եւ ընդլայնուած քննարկումները

Մարտի 3-ին Թեհրանում աւարտուեց «Հայ Դատն այսօր» 14-րդ խորհրդաժողովը «Հայաստանը, Արցախը, եւ յարափոփոխ տարածաշրջանը» խորագրով, որը նախաձեռնել էր Հայկական հարցերի ուսումնասիրութեան կենտրոնը (ՀՈՒՍԿ): Ընդլայնուած խորհրդաժողով, որի օրակարգում էր Հայաստանի, Արցախի եւ միջազգային

քաղաքական, սոցիալ-տնտեսական եւ բարոյահոգեբանական իրավիճակի քննութիւնը, տարբեր մարտահրաւէրների գնահատումը, հայութեան զարգացման տեսլականի եւ այլ հարցերի մասին քննարկումները:

Երկօրեայ խորհրդաժողովն իր ընդլայնուած քննարկումների ժամանակ մասնաւորապէս, անդրադարձել է ՀՀ պարտուած իշխանութիւնների վարած ապազգային քաղաքականութեան աղէտաբեր լինելու հանգամանքին, շարունակող ամբոխավարական մօտեցումների հետեւանքների, Արցախի հարցը անտեսելու սպառնալիքների, «Խաղաղութեան դարաշրջան» բացելու ՀՀ իշխանութիւնների վարած քաղաքականութեան բովանդակային սնանկութեան, սփիւռքի գործօնը անտեսելու հանգամանքին, հայ-իրանական գործակցութիւնների խորացման անհրաժեշտութեան, ադրբեջանա-թուրքական տարածաշրջանային յաւակնութիւնների մարտահրաւէրների եւ հնարաւոր զարգացումների, գիտելիքահէնք տնտեսութեան զարգացման, ինչպէս նաեւ հայ-թուրքական յարաբերութիւնների խնդրին՝ հայաստանեան եւ սփիւռքեան քաղաքական եւ հասարակական մտքի ընկալումների, ինչպէս նաեւ՝ Ռուսաստանի տարածաշրջանային դերակատարութեանը եւ այլ հարցերի:

Խորհրդաժողովի զեկուցաբերներն էին՝ ՀՅԴ Գերագոյն մարմնի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելեանը, ՀՅԴ Բիրոյի անդամ, Բիւրոյի Հայ Դատի եւ քաղաքական հարցերի գրասենեակի պատասխանատու Կիրօ Մանոյեանը, Ալիքօնլայնի խմբագիր-պատասխանատու Արամ Շահնազարեանը, ազգային հասարակական գործիչներ Արթուր Յովսէփեանը, Նոէլ Մինասեանը, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Աննա Գրիգորեանը, Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ Ս. արք. Սարգսեանը, ադրբեջանագէտ Անժելլա Էլիբեկովան, իրանագէտ Ահարոն Վարդանեանը եւ քաղաքագէտ Հրանտ Մելիք-Շահնազարեանը:

Text Link